ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ
ՀՐԱՄԱՆ

02 մայիսի 2023 թվական N ԱԿ 396 - Ա

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՏԵՍՈՒՉ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 66-28.5-Մ4-1) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 39-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ և 151-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշման հավելվածի 14-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերով և հիմք ընդունելով Հարություն Հարությունյանի 2023 թվականի մայիսի 2-ի անձնական դիմումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.Հարություն Հարությունյանին 2023 թվականի մայիսի 3-ից նշանակել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հարավային տարածքային կենտրոնի բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության բաժնի ավագ տեսուչ (ծածկագիր՝ 66-28.5-Մ4-1)՝ 9 ամիս փորձաշրջանով:

2.Հարություն Հարությունյանի փորձաշրջանը համակարգող նշանակել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի արևմտյան տարածքային կենտրոնի բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության բաժնի պետ-տեսուչ (ծածկագիր՝ 66-28.3-Ղ5-2) Լուիզա Միրզոյանին:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY OF THE REPUBLIC OF ARMENIA

0047 ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

3. Հարություն Հարությունյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Recoverable Signature

X

ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN SLAVIK 3807890467

ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

0047 ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107